Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՕՖԵԼՅԱ ԶԱՔԱՐՅԱՆԻ ԵՎ ԱՐՓԻՆԵ ԱՌԱՔԵԼՅԱՆԻ Ք. ՔԻՇՆԵՎ (ՄՈԼԴՈՎԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը

Օֆելյա Զաքարյան

Արփինե Առաքելյան

2. Զբաղեցրած պաշտոնը

Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի բարձրագույն կրթության և գիտության քաղաքականության վարչության միջազգային համագործակցության բաժնի գլխավոր մասնագետ

Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի բարձրագույն կրթության և գիտության քաղաքականության վարչության միջազգային համագործակցության բաժնի ավագ մասնագետ

3. Գործուղման վայրը և ժամկետները

Մոլդովայի Հանրապետություն, ք. Քիշնև, հունվարի 26-ից 29-ը, 2025 թվական

4. Հրավիրող կողմը

Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի «Միջազգայնացում և շարժունություն» աշխատանքային խմբի համանախագահություն

5. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Մասնակցություն Բոլոնիայի գործընթացի «Միջազգայնացում և շարժունություն» աշխատանքային խմբի առաջին հանդիպմանը

6. Քննարկված թեմաները

- «Միջազգայնացում և շարժունություն» աշխատանքային խմբի նպատակները և խնդիրները,

- «Միջազգայնացում և շարժունություն» աշխատանքային խմբի 2024-2027թթ. աշխատանքային պլանը և հետագա գործողությունները,

- շարժունության խոչընդոտները և դրանց հնարավոր լուծումները,

- հավասար շարժունության սահմանումը և կիրառումը,

- կանաչ և ներառական շարժունության զարգացման խոչընդոտները և դրանց հաղթահարման հնարավոր ուղիները,

- «Միջազգայնացում և շարժունություն» աշխատանքային խմբի 2-րդ հանդիպմանն առնչվող հարցերը և ժամանակացույցը,

- այլ հարցեր:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ներկայացուցիչները հունվարի 27-ին մասնակցեցին Բոլոնիայի գործընթացի «Միջազգայնացում և շարժունություն» աշխատանքային խմբի առաջին հանդիպմանը և ներկայացրին աշխատանքային խմբին մասնակցության նպատակը: Աշխատանքային խմբի համանախագահների կողմից ներկայացվեցին Տիրանայի կոմյունիկեի շրջանակում միջազգայնացմանն ու շարժունությանն առնչվող դրույթները, Բոլոնիայի գործընթացի հետամուտ խմբի և Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի քարտուղարության կողմից իրականացվող աշխատանքները, 2024-2027թթ. համար նախատեսվող աշխատանքային պլանը, աշխատանքային խմբի կառուցվածքը և առաջիկա հանդիպումների նախնական օրակարգը: Քննարկվեց «Միջազգայնացում և շարժունություն» աշխատանքային խմբի 2024-2027թթ. աշխատանքային պլանը, վերջինիս շրջանակում նախատեսվող գործողությունների ծրագրի և միջազգայնացմանն ու շարժունությանն առնչվող սահմանումների վերաբերյալ բառարանի մշակման նպատակը և ժամանակացույցը, ինչպես նաև դրանց մշակման նպատակով ձևավորվող ենթախմբերի գործառույթները և առաջիկա աշխատանքները:

Հունվարի 28-ին աշխատանքային խումբը քննարկեց շարժունության զարգացման խոչընդոտները և դրանց հնարավոր լուծումները՝ կարևորելով տեղեկատվության տարածումը, միջմշակութային փորձի փոխանակումը, կարճաժամկետ և երկարաժամկետ, ինչպես նաև կայուն և կանաչ շարժունության զարգացումը, վերջիններիս ուղղված վերապատրաստումների և դասընթացների անցկացումը: Համանախագահների կողմից ներկայացվեցին հավասար, կանաչ և ներառական շարժունության սահմանումները, որի շրջանակում վերջիններիս

վերաբերյալ տեղի ունեցան խմբային քննարկումներ: Անդրադարձ կատարվեց անհավասար շարժունության պատճառներին, ներգնա և արտագնա շարժունության զարգացման մարտահրավերներին և դրանց հաղթահարման հնարավոր ուղիներին:

8.Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթեր

«Միջազգայնացում և շարժունություն» աշխատանքային խմբի 2024-2027թթ. աշխատանքային պլանի շրջանակում նախատեսվող գործողությունների ծրագրի և միջազգայնացմանն ու շարժունությանն առնչվող սահմանումների վերաբերյալ բառարանի մշակման նպատակով ուսումնասիրել միջազգայնացման ու շարժունության վերաբերյալ առկա ուղեցույցները և փաստաթղթերը:

9.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Աշխատանքային խմբի կողմից առաջարկվեց ակտիվորեն մասնակցել «Միջազգայնացում և շարժունություն» աշխատանքային խմբի 2024-2027թթ. աշխատանքային պլանի շրջանակում նախատեսվող գործողությունների ծրագրի և միջազգայնացմանն ու շարժունությանն առնչվող սահմանումների վերաբերյալ բառարանի մշակման նպատակով ձևավորվող ենթախմբերի աշխատանքներին:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

Օֆելյա Զաքարյան

Արփինե Առաքելյան

03 փետրվարի 2025թ.